Քուլաջա: *Հագնում են համարեա միայն հարսները միթանի վրայից, իսկ աղքատները շատ քիչ. հասնում է մինչև ծնկները. կարում են փասօնիայից. կուրծքը եռանկիւնաձև բաց է. թևերը կարում են մինչև արմունկը, ապա կոճկում են բազուկի վրայից մինչև դաստակը. գործելու ժամանակ գեղջկուհին այդ մասը վերև է ծալլում, որ թևերը չը խանգարեն գործին։*

ԳԼԽԻ ՅԱՐԴԱՐԱՆՔ

Գլխաշոր: *Կանայք մազերը սանրելուց յետոյ, ուղիղ մէջտեղից երկուսի բաժանում և երկու կամ մի քանի հիւս են շինում և ծամ թելերով ամրացնում, ապա գլուխները ծածկում են գլխաշորով. դա սպիտակ, եռանկիւնաձև մի կտոր է, որի մի ծայրին կոճակ են կարում, իսկ միւս ծայրին պարան կապում, ապա ձգելով գլուխներին, անց են կացնում կզակի տակով և պարանը ամրացնում կոճակին։*

Երեսածոց: *Սա շղթայաձև 7—8 թումանի արժողութեամբ մի արծաթ է, որ ձգում են գլուխներին. ունի չորս հատ կեռ (չանգալ), որից երկուսն ամրացնում են գլխի վրայ, գագաթին, իսկ միւս երկուսն ականջների կողից կապում են լաչիկի վրայ, որպէսզի ապահով մնան գլխի շորերը։*

Կօս: *Սա կլոր, մօտ մի վերշօկ լայնութեամբ և իւրաքանչիւր գագաթի շրջապատի մեծութեան կարտօն է. վրան Խօմսարի չթից շոր քաշած, որ ղալուր են տալիս և ապա դնում են գլուխները։*

Քնթակալ (եաշմաղ): *Սա մի քառ. մետր մեծութեան սպիտակ մալմալ է, եռանկիւնի ծալած, որով բերաններն են ծածկում. ձգում են քթի վրայից՝ լաչիկի տակ և կապում գլխի ետևից. կարում են սպիտակ մալմալից։*

Լաչիկ: *Պատրաստում են եռանկիւնաձև, կարմիր ներկած մթխալից. դնում են կօտի վրայ, որ ծածկում է ետևից մինչև գօտատեղը, իսկ առջևից՝ այտերը։*

Մեծ ամօթ է համարւում կնոջ և հարսի համար ծնօտը